



Տաթևիկ ԱՌՈՒՍԱՄՅԱՆ

Օրբելի վերլուծական կենտրոնի հետազոտող-վորձագետ

2018 թ. ավարտել է ՀՊՏՀ-ն «Միջազգային տնտեսական հարաբերություններ» մասնագիտությամբ և ընդունվել մագիստրատուրա: 2019-ից առ այսօր Օրբելի վերլուծական կենտրոնի հետազոտող-վորձագետ է:

ՀԱՅ-ՎՐԱՑԱԿԱՆ ՏՆՏԵՍԱԿԱՆ ՀԱՐԱԲԵՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ՏԱՐԱԾԱՇՐՋԱՆԱՅԻՆ ՆՈՐ ԶԱՐԳԱՑՈՒՄՆԵՐԻ ԽՈՐԱՊԱՏԿԵՐՈՒՄ

Հիմնաբառեր. *հայ-վրացական կապեր, տնտեսություն, տարածաշրջան, նախագծեր*

Երկրների միջև առկա տնտեսական կապերի ուսումնասիրությունն առանցքային նշանակություն է ձեռք բերում հատկապես տարածաշրջանային անվտանգության ապահովման տեսանկյունից: Հաշվի առնելով խոշոր խաղացողների հետաքրքրությունները նաև աշխարհագրական առումով, Հայաստանը պետք է անի հնարավոր ամեն բան տարածաշրջանային ծրագրերին իր ներգրավվածությունն ապահովելու ուղղությամբ: Նմանօրինակ հնարավորություն է Չինաստանի «Մեկ գույրի, մեկ ճանապարհի» նախաձեռնությունը, որը, կարծես, միավորում է տարածաշրջանի երկրներին, որոնք, բացառությամբ Հայաստանի, արդեն իսկ զգալի ներգրավվածությունն ունեն դրանում՝ դառնալով Եվրոպայի ու Ասիան շաղկապողներ:

Հայաստանում ձևավորված իրավիճակը և աշխարհաքաղաքական նոր իրողությունները ևս մեկ անգամ ընդգծեցին մեր երկրի արտաքին քաղաքական առաջնահերթությունները՝ նախ և առաջ տարածաշրջանում համագործակցության և կայուն զարգացման բարենպաստ միջավայր ստեղծելու առումով: Լինելով շրջափակված սահմանակից չորս երկրներից երկուսի կողմից՝ ՀՀ-ի համար կարևոր նշանակություն ունի ակտիվ համագործակցությունը մյուս երկու հարևանների՝ Իրանի և Վրաստանի հետ: Թեև Հայաստանի ու Վրաստանի արտաքին քաղաքական նախընտրությունները տարբերվում են, այդուհանդերձ, երկրների տնտեսական հարաբերությունների զարգացումը կրում է դինամիկ բնույթ:


Տարածաշրջանային անվտանգության ապահովման

տեսանկյունից, առանցքային նշանակություն է ստանում երկրների միջև առկա տնտեսական կապերի ուսումնասիրությունը: Եվ այսպես՝ Ադրբեջանն ու Վրաստանը ռազմավարական դաշնակիցներ են, որոնց համագործակցությունը տնտեսական ոլորտում առավել ընդգծված է՝ տարիների ընթացքում ձևավորելով նաև տնտեսական ազդեցության գոտիներ՝ իրենց ակտիվ քաղաքական դերակատարմամբ: Մասնավորապես՝ Վրաստանի տարածքով են անցնում ադրբեջանական նավթագազային, էներգետիկ խոշոր լոգիստիկ հզորություններն ու ճանապարհը դեպի Սև ծով ու վրացական նավահանգիստներ: Ադրբեջանի նավթային (ինչպես հայտնի է, աշխարհում 24-րդ տեղում է նավթի արտադրության ծավալով¹) և բնական գազի հիմնական հանքավայրերն արդեն միացված են Սև ծովի և միջերկրածովյան շուկաներին Վրաստանով անցնող խողովակաշարերի և երկաթուղիների միջոցով՝ միաժամանակ ապահովելով վերջինիս էներգետիկ անվտանգությունը: Ավելին, Ադրբեջանն ու Վրաստանը ռազմավարական համագործակցություն ունեն Թուրքիայի հետ: Ի հավելումն դրա, նշենք, որ Ադրբեջան-Վրաստան առևտրատնտեսական հարաբերությունների խորապատկերում Թուրքիան զգալի նշանակություն

ունի Վրաստանի համար՝ որպես վերջինիս առևտրային գործընկեր, և բացի այդ, 2019 թվականի տվյալներով՝ Թուրքիան Վրաստանում երկրորդ ամենախոշոր ներդրողն է²:


Ադրբեջանը Վրաստանի խոշոր առևտրային գործընկերներից մեկն է և առևտրաշրջանառության ծավալով Թուրքիայից, Ռուսաստանից, Չինաստանից հետո չորրորդն է³: Երկու երկրների միջև առևտրաշրջանառության ծավալը ավելի քան 1 մլրդ ԱՄՆ դոլար է, իսկ դրա տեսակարար կշիռը Վրաստանի ընդհանուր առևտրաշրջանառության մեջ՝ 8 տոկոս: Արտահանման գծով երկրի տեսակարար կշիռը ավելի քան 13 տոկոս է, իսկ արտահանման ծավալը՝ 508 մլն ԱՄՆ դոլար, ներմուծումն Ադրբեջանից ընդհանուր ներմուծման 6 տոկոսն է կամ 558 մլն ԱՄՆ դոլար⁴: Հետևաբար՝ Ադրբեջանի համար Վրաստանն արտաքին առևտրային կարևոր ուղղություններից մեկն է (գծապատկեր 1):

Վրաստան-Ադրբեջան-Թուրքիա համագործակցության խորապատկերում Հայաստան-Վրաստան տնտեսական հարաբերությունները բնութագրող ցուցանիշները զգալիորեն համեստ են: Մասնավորապես՝ Հայաստան-Վրաստան առևտրաշրջանառության տեսակարար կշիռը Հայաստանի արտաքին առևտրաշրջանա-



ԳԾԱՊԱՏԿԵՐ 1
Վրաստան-Ադրբեջան առևտրաշրջանառության ծավալները 2015-2019 թթ., մլն ԱՄՆ դոլար

¹ Azerbaijan Oil, <https://www.worldometers.info/oil/azerbaijan-oil/>
² Վրաստանի ազգային վիճակագրական կոմիտե, <https://www.geostat.ge/en/single-categories/122/annual>
³ Նույն տեղում:
⁴ <https://www.geostat.ge/en/single-categories/99/external-trade-tendencies-of-georgia>



ԳԾԱԿԱՏԿԵՐ 2


Հայաստան-Վրաստան առևտրաշրջանառության ծավալները 2014-2019 թթ., հազ. ԱՄՆ դոլար

ռության մեջ մոտ 2 տոկոս է, ընդ որում, Վրաստանից ներմուծման՝ ըստ արտահանող երկրի ցուցանիշն էականորեն տարբերվում է ըստ ապրանքի ծագման երկրի ցուցանիշից և գրեթե 6 անգամ ավելի է, ինչը բացատրվում է հենց Հայաստանի համար Վրաստանի՝ որպես տարանցիկ երկրի կարևորագույն նշանակությամբ: Վերջին տարիներին Ա Հայաստանի, Ա Ադրբեջանի առևտրային հաշվեկշիռները Վրաստանի հետ վատթարացել են. երկու երկրի դեպքում էլ պատճառը ներմուծման ավելացման և, միաժամանակ, արտահանման կրճատման մեջ է: Ըստ ՀՀ պետական եկամուտների կոմիտեի տվյալների՝ Հայաստանից արտահանումը հիմնականում իրականացվում է ավոտոմոբիլային տրանսպորտով, որի տեսակարար կշիռը ավելի քան 53 տոկոս է⁵, ապա երկաթուղայինով, և, թեև, որպես այդպիսին, բացակայում են տվյալները, թե քանի տոկոսն է անցնում Վրաստանի տարածքով, այնուամենայնիվ, արդեն իսկ վերոնշյալ ցուցանիշներից ակնհայտ է դառնում Վրաստանի դերը Հայաստանի համար: Վրաստանն էլ, իր հերթին, որպես տարանցիկ գոտի (տրանսպորտ, գազի ներմուծում, զբոսաշրջային ծառայություններ և այլն), շահում է բարենպաստ աշխարհագրական

դիրքի արդյունքում (գծապատկեր 2): Փոխգործակցության մեկ այլ կարևոր ուղղություն է ներդրումների իրականացումը: Մասնավորապես՝ Հայաստանում վրացական ծագմամբ ներդրումները (համախառն հոսքեր), սկսած 1988 թվականից մինչև 2019 թվականը, 8 092.1 մլն ՀՀ դրամ կամ մոտ 16 մլն ԱՄՆ դոլար են⁶, ընդ որում, օտարերկրյա ուղղակի ներդրումները բացասական նշանով են: Հայաստանի օտարերկրյա ուղղակի ներդրումները Վրաստանում միայն 2019 թվականին կազմել են մոտ 14 մլն ԱՄՆ դոլար: Համեմատության մեջ դիտարկելով ներդրումների վիճակագրությունը երկու երկրներում՝ տեսնում ենք, որ Ադրբեջանը միայն 2019 թվականին ավելի քան 35 մլն ԱՄՆ դոլարի օտարերկրյա ուղղակի ներդրումներ է իրականացրել Վրաստանում⁷: Սա, թերևս, 2014-2017 թթ. համեմատությամբ էականորեն փոքր թիվ է, երբ իրագործվում էին երկկողմ լոգիստիկ, էներգետիկ, ենթակառուցվածքային լայնածավալ ծրագրեր: Ինչևէ, այս ամենը ցույց է տալիս Վրաստան - Ադրբեջան երկկողմ հարաբերությունների խորությունը՝ հաշվի առնելով նաև մի շարք օբյեկտիվ պատճառներ (գծապատկեր 3):

Վրաստանն ու Հայաստանը թեև տնտե-

⁵ ՀՀ պետական եկամուտների կոմիտեի, ՀՀ արտաքին առևտրին ըստ տրանսպորտի տեսակների, <https://www-peteka-mutner.am/Content.aspx?itn=csCIForeignTradeByTransportTypes>
⁶ ՀՀ վիճակագրական կոմիտեի, https://www.armstat.am/file/article/sv_02_20a_420.pdf
⁷ Վրաստանի ազգային վիճակագրական կոմիտեի, <https://www.geostat.ge/en/modules/categories/191/foreign-direct-investments>



ԳԾԱՊԱՏԿԵՐ 3

Հայկական և ադրբեջանական ՕՌԻՆ-ները Վրաստանում 2014-2019 թթ., հազ. ԱՄՆ դոլար

սական տարբեր ինտեգրման բևեռներում են, այդուհանդերձ, հայ-վրացական հարաբերությունների ամրապնդումը և դրանց հեռանկարային զարգացումը ռազմավարական նշանակություն ունեն Հայաստանի համար: Արցախյան վերջին պատերազմը ևս մեկ անգամ ցույց տվեց, թե որքան կարևոր է առևտրատնտեսական հարաբերությունները որակապես նոր մակարդակի բարձրացնելը:

Անդրադառնալով Հարավային Կովկասում անվտանգության ապահովման ու տնտեսական կապերի զարգացման խընդիրներին՝ չենք կարող շրջանցել տարածաշրջանային լայնածավալ ներդրումային ծրագրերը, որոնցից հատկանշական է Չինաստանի կողմից իրականացվող՝ «Մեկ գոտի, մեկ ճանապարհը»: Այս համատեքստում, Վրաստանը Չինաստանին դիտարկում է որպես հիմնական առևտրային գործընկեր և ներդրող, միաժամանակ, լինելով կարևոր տրանսպորտային միջանցքի տարանցիկ հանգույց, գերխնդիր է համարում ենթակառուցվածքային ներդրումների ներգրավումը:

Նավթի և գազի պաշարներ ունեցող Ադրբեջանը գլխավոր դերակատարն է Բաքու-Թբիլիսի-Ջեյհան նավթամուղի, Բաքու-Թբիլիսի-Էրզրում գազատարի (Հարավային Կովկասի գազատար) էներգետիկ նախագծերում: Բաքու-Թբիլիսի-Կարս եր-

կաթուղին Ադրբեջանի գերակայությունն է, որի շրջանակում Ադրբեջանը հիմնական ներդրողն է և 700 միլիոն ԱՄՆ դոլարի վարկ է տրամադրել Վրաստանին՝ վերջինիս տարածքում երկաթուղու կառուցման և դրա վերականգնման համար: Բացի այդ, Ադրբեջանը զգալի ռեսուրսներ է ներդնում «Հյուսիս-Հարավ» միջանցքը սեփական ուղղությամբ վերափոխելու համար⁸: Ադրբեջանն Իրանին 500 միլիոն ԱՄՆ դոլարի վարկ է տրամադրել «Ռաշթ (Իրան) - Աստարա (Ադրբեջան)» երկաթուղու ավարտի համար, որը կապում է Իրանի և Ռուսաստանի երկաթուղային ցանցերը Ադրբեջանի տարածքով: Արցախյան հիմնախնդրով և այլ գործոններով պայմանավորված՝ Հայաստանը դուրս է մնացել տարածաշրջանային նշանակալի նախագծերից, և հենց նշվածը հաշվի առնելով՝ պետք է արագացնել աշխատանքը «Հյուսիս-Հարավ» ռազմավարական ծրագիրն ավարտին հասցնելու համար, ձեռնարկել գործնական քայլեր Հայաստան-Իրան երկաթուղու կառուցմանն անհրաժեշտ ներդրումների ներգրավման ուղղությամբ:

Ամփոփելով մեկ անգամ ևս ընդգծենք, որ տարածաշրջանի երկրներին միավորող գործոնը Չինաստանի «Մեկ գոտի, մեկ ճանապարհ» նախաձեռնությունն է, որտեղ արդեն զգալի ներգրավվածություն ունեն տարածաշրջանի բոլոր երկրները՝

⁸ New Economic Corridors in the South Caucasus and the Chinese One Belt One Road, https://epfarmenia.am/sites/default/files/Document/New_Economic_Corridors_in_the_South_Caucasus_and_the_Chinese_One_Belt_One_Road_2018.pdf?

բացառությամբ Հայաստանի: Հաշվի առնելով երկրների միջև զարգացած քաղաքական հարաբերությունների հաստատման կարևորությունը ըստ տնտեսական շահերի, ինչպես նաև Հայաստանի աշխարհագրական դիրքի առանձնահատկու-

թյունները՝ կարծում ենք՝ պետք է հնարավորինս մեծացնել մեր երկրի ներգրավվածությունը նշված նախագծերին, ինչը կարևոր է, նախ և առաջ, տարածաշրջանում համապատասխան դերակատարություն ստանձնելու առումով:

ՕԳՏԱԳՈՐԾՎԱԾ ԳՐԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ

1. ՀՀ պետական եկամուտների կոմիտե, <https://www.petekamutner.am/Content.aspx?itn=csCIForeignTradeByTransportTypes>
2. ՀՀ վիճակագրական կոմիտե, https://www.armstat.am/file/article/sv_02_20a_420.pdf
3. Կրաստանի ազգային վիճակագրական կոմիտե, https://www.geostat.ge/media/32463/External-Merchandise-Trade-2019_publication-2020.pdf
4. Azerbaijan Oil, <https://www.worldometers.info/oil/azerbaijan-oil/>
5. Georgia prohibits transit of military cargo amid Armenia, Azerbaijani conflict, <https://agenda.ge/en/news/2020/3076>
6. New Economic Corridors in the South Caucasus and the Chinese One Belt One Road https://epfarmeria.am/sites/default/files/Document/New_Economic_Corridors_in_the_South_Caucasus_and_the_Chinese_One_Belt_One_Road_2018.pdf
7. UNDP Armenia, ARMENIA AND GEORGIA ECONOMIC RELATIONS, Yerevan 2007, https://www.un.am/up/library/Arm%20and%20Georgia%20Econ%20Relations_eng.pdf

Татевик АРУСТАМЯН

Исследователь аналитического центра «Орбели»

РЕГИОН И АРМЕНИЯ

АРМЯНО-ГРУЗИНСКИЕ ЭКОНОМИЧЕСКИЕ ОТНОШЕНИЯ НА ФОНЕ НОВЫХ РЕГИОНАЛЬНЫХ РАЗВИТИЙ

Изучение существующих экономических связей между странами имеет ключевое значение с точки зрения обеспечения региональной безопасности. Армения, учитывая интересы крупных игроков в регионе и свой географический потенциал, должна как можно больше участвовать в региональных программах. Одной из таких возможностей является инициатива Китая «Один пояс, один путь», объединяющая, по-видимому, все страны региона, которые, за исключением Армении, уже обеспечили свое значимое участие в соединении Европы и Азии.

Ключевые слова: армяно-грузинские отношения, экономика, регион, инвестиционные проекты

Tatevik ARUSTAMYAN

Researcher at «Orbeli» Analytical Research Center

REGION AND ARMENIA

ARMENIAN-GEORGIAN ECONOMIC RELATIONS AGAINST THE BACKGROUND OF NEW REGIONAL DEVELOPMENTS

The study of the existing economic ties between the countries is of key importance from the point of view of ensuring regional security. Given the interests of major players in the region and its geographical potential, Armenia should be involved in regional programs as much as possible. Such an opportunity is China's "One Belt, One Road" initiative which seems to unite all the countries of the region, which, with the exception of Armenia, have already secured their significant involvement by becoming the countries connecting Europe and Asia.

Key words: Armenian-Georgian relations, economy, region, investment projects